



«JUST CASCO» ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Խմբագրություն՝ խմբ. JC01
(Ակտիվի դաս՝ հրապարակային)

1. ԻՆՉ Է «JUST CASCO»-Ն

«JUST CASCO» ապահովագրության ծրագրով փոխհատուցվում են ՃՏՊ հետևանքով տուժած ավտոտրանսպորտային միջոցին պատճառված գույքային վնասները, որոնք գերազանցում են ԱՊՊԱ կամ այլ ապահովագրության պայմանագրերով հատուցման ենթակա գումարի առավելագույն չափը:

2. ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ «JUST CASCO» ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«JUST CASCO» ապահովագրության պայմանագիր կարող է ձեռք բերել.

- ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը,
- ավտոտրանսպորտային միջոցի վարձակալը,
- վարելու միջոցով ավտոտրանսպորտային միջոց ներմուծողը:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՑԹ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

Ապահովագրական ծածկույթ	Տարեկան ապահովագրավճար
1.000.000 ՀՀ դրամ	5.000 ՀՀ դրամ
2.000.000 ՀՀ դրամ	10.000 ՀՀ դրամ

4. ԵՐԲ ԵՎ ԻՆՉ ՉԱՓՈՎ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

Հատուցումը տրամադրվում է ավտոտրանսպորտային միջոցին պատճառված վնասի մեծության և վնաս պատճառողի ԱՊՊԱ պայմանագրով ստացած հատուցման տարբերության չափով՝ ապահովագրական ծածկույթի սահմաններում:

Օրինակ

ՃՏՊ հետևանքով Ձեր ավտոմեքենային պատճառված վնասը կազմել է **2.800.000 ՀՀ դրամ**:

ԱՊՊԱ պայմանագրով Ձեր ավտոմեքենային պատճառված վնասի դիմաց դուք կարող եք ստանալ առավելագույնը 1.800.000 ՀՀ դրամի չափով ապահովագրական հատուցում, իսկ մնացած 1.000.000 ՀՀ դրամի չափով հատուցում ստանալու լավագույն լուծումը «Նաիրի Ինչուրանս» Ապահովագրական ընկերության Just Casco պայմանագիր ունենալն է: